ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.2140909
28-07-2026թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2001, ՎԱՆԱՁՈՐ,*
ՏԵՐՅԱՆ Փ., 6, 19
karinesimonyan1@gmail.com : 37499616961

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի պարոն Մկրտչյան, օրերս հայտարարել էիք, որ Ձեր «ղեկավարած մարզպետարանում չի կարող լինել որևէ պետական պաշտոնյա, որը որևէ տենդերի մեջ մասնակցություն ունենա: Նա կազատվի աշխատանքից որպեսների ընթացքում, և նաև, մեծ հավանականությամբ, Քրեական օրենսգրքի սահմաններ կհատի, և իրավապահներն էլ կմիջամտեն»:

«Ազատություն» ռադիոկայանը հրապարակել է առնվազն երկու պաշտոնյայի ու մեկ գլխավոր մասնագետի անուն, որոնց ընտանիքի անդամները՝ մի դեպքում մայրը, մյուս երկու դեպքերում նրանց կանայք ընկերությունների սեփականատերեր են, որոնք ակտիվորեն մասնակցում են պետական պատվերներին ու որպես մրցույթի միակ մասնակից շահում տենդերներում:

1. Արդյո՞ք տեղյակ չեք եղել այս մասին:

2. Եթե այո, ապա սա համարո՞ւմ եք շահերի բախում կամ հանցագործություն, ինչպես ենթադրվում է Ձեր խոսքից:

3. Համարո՞ւմ եք, որ եթե այս ընկերությունները՝ «Ղարաքիլիսա» ՍՊԸ և «ԼՍ նախագիծ» ՍՊԸ, մարզպետարանի աշխատակիցների անուններով չեն, այլ նրանց ընտանիքի անդամների, ապա սա թույլատրելի է և ամենևին էլ խախտում չեք տեսնում:

4. Եթե չգիտեինք ու նոր եք տեղեկացել այս մասին, ապա պատրաստվո՞ւմ եք արդյոք Ձեր ենթականերին ազատել աշխատանքից ու դիմել իրավապահներին «Ազատության» հրապարակման հիմքով:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ

հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԿԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ